ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ. ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

*DOI:10.24234/journalforarmenianstudies.v2i69.168*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Ֆելիքս Բախչինյանի թողած գրական ժառանգությունը հայ գրականության մնայուն արժեքներից է: Նա սերունդներին թողել է քննադատական, գեղարվեստական, հրապարակագրական, թարգմանական, հրատարակչական գրքերի, մենագրությունների արժեքավոր հարստություն: Բախչինյանն իր գրական ու հասարակական գործունեությամբ նպաստել է մերձբալթյան երեք հանրապետությունների, Նորվեգիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի ժողովուրդների միջև բարեկամության, մշակութային կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Նրա ջանքերի շնորհիվ է ստեղծվել մեծ մարդասեր, գիտնական, ճանապարհորդ, հայ ժողովրդի թանկ բարեկամ «Ֆրիտյոֆ Նանսեն» թանգարանը, որի տնօրենն էր: Նրա անվան հետ է կապվում լիտվացի բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսի ծանոթությունը Հայաստանի, հայ մշակույթի, հայոց մեծերի հետ: Փոխադարձ մտերմության արդյունքում հրատարակվեցին բազմաթիվ գրքեր, թարգմանություններ՝ առավել ամրապնդելով հայ-լիտվական գրական, մշակութային կապերը: Դժվարին ճանապարհ անցած գրողն ամուր թելերով կապված է եղել իր ծննդավայրին: Նրա գրական աշխարհի վրա իր խոր ու նվիրական հետագիծն է թողել հայրենի տունը: Նրա ստեղծագործության անբաժանելի մասն են կազմում թարգմանությունները, գրախոսություններն ու հոդվածները:

Հանգել ենք այն եզրակացության, որ Ֆելիքս Բախչինյանը տաղանդավոր է թե՛ իբրև արձակագիր, թե՛ քննադատ, թե՛ թարգմանիչ: Նրա գեղարվեստական

արձակում իր արժանավոր տեղն է զբաղեցնում «De'ja Vu. Հալեպ՝ սիրո և մահվան հովիտ» վեպը, որը կարելի է դասել եղեռնին նվիրված լավագույն գրքերի շարքը:

***Բանալի բառեր և արտահայտություններ.*** *հիշողություն, ցեղասպանություն, ստեղծագործական կյանքի բնութագիր, կամք, ճակատագիր, տխրություն, թարգմանություն:*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ֆելիքս Բախչինյանը հայ գրականության ինքնատիպ դեմքերից է: Նրա հետաքրքրությունները շատ բազմազան են: Բավական է թերթել նրա թողած գրական, գրականագիտական, թարգմանական ժառանգությունը և պատկերացնել նրա խոշոր ծառայությունը հայ գրականությանը, մշակույթին: Նրա ստեղծագործության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում պատմվածքներն ու վիպակները: Շատ հաճախ, կյանքից վերցրած իրական փաստերն ու իրադարձությունները դառնում են գեղարվեստական երկի համար կարևոր սկզբնաղբյուր: Նրա գրական, մշակութային սերտ կապերի, թարգմանությունների շնորհիվ բազմաթիվ օտարազգի գրողներ ճանաչվեցին ու սիրվեցին մեր ժողովրդի կողմից:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում ընկած է Ֆ. Բախչինյանի գրական դիմանկարի արտացոլման, ստեղծագործական արգասավոր ճանապարհի ներկայացման, քննվող նյութի համադրման սկզբունքը: Աշխատանքն իրականացնելիս ուսումնասիրել ենք Ֆելիքս Բախչինյանի կյանքի կարևոր փաստերը, գեղարվեստական երկերը, տարբեր տարիներին տպագրված, գրականագիտական հոդվածները, հայ տեսաբանների բազմաբնույթ գնահատականները նրա մասին, մամուլում տպագրված՝ թեմային վերաբերող նյութերը:

Հոդվածը շարադրելիս օգտվել ենք գրականագիտության մեջ ընդունված և հաճախ կիրառվող վերլուծական, քննական մեթոդներից:

**ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ֆելիքս Բախչինյան անունն իր մեջ խտացնում է հարուստ ու իմաստավորված կենսագրություն: Դժվար է մեկ նախադասության մեջ ամփոփել մի հրաշալի մարդու, տաղանդավոր գրողի, գրականագետի, թարգմանչի, հասարակական գործչի բեղուն ճանապարհը: Թերթում ես նրա կյանքի էջերը և զարմանում, երբ է հասցրել այսքան բան անել, որքան խայտաբղետ է նրա հետաքրքրությունների շրջանակը, բազմախորհուրդ ու անպարփակ: Նա հեղինակ է հարյուրից ավելի գրքերի՝ մենագրություններ, վիպակներ, պատմվածքներ, հոդվածներ, գրախոսություններ, էսսեներ, ակնարկներ: Նրա ստեղծագործական ու գիտական որոնումները սահմաններ չեն ճանաչում: Տարիների հետ նա յուրատեսակ հոգևոր կամուրջ ստեղծեց և ամրապնդեց բարեկամական հարաբերությունները հայ – վրացական, հայ -ուկրաինական, հայ– լիտվական: Նրա անվան հետ անխզելիորեն կապված է նորվեգացի մեծ մարդասեր, բևեռախույզ, գիտնական, ճանապարհորդ, հայ ժողովրդի թանկ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անունը: Բախչինյանի ջանքերի շնորհիվ ստեղծվեց Նանսենի թանգարանը և «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամը, «Հայոս – Քարթլոս» հայ – վրացական գրական անկախ հանդեսը:

Ծնվել է Ալավերդիում, հայկական բնաշխարհի մի անկրկնելի վայրում, բայց հեռանալով ծննդավայրից, որտեղ էլ որ բնակություն է հաստատել իր ստեղծագործության ներշնչարանը եղել և մնում է իր փոքրիկ «հայրենիքը», այն լուսավոր ու մաքուր տարիները, որ ամբողջ կյանքում չեն լքել նրան: Որքա՜ն ճիշտ է բնութագրել նրան Լևոն Անանյանը. «Ֆելիքս Բախչինյանի ստեղծագործական ակունքները գտնվում են իր հայրենի բնաշխարհում: Նրա գեղագիտության հիմքերն այն կուսական աշխարհում են, այն լեռների ու ձորերի մեջ, որը մի հատիկ բառով կոչվում է Լոռի: Մանկության պես մաքուր, մանկության պես անմեղ, մանկության պես կարճատև մեր կարոտն ենք գտնում նրա տողերում: Եվ փորձում ենք մի քանի ակնթարթ պահել ու պահպանել այդ մաքրամաքուր աշխարհից եկող ուժը, հուշն ու հրաշքը» **(Անանյան Լ., 2011)** :

Բախչինյանը ժամանակի և տարածության անսահման օվկիանոսում ճգնում է իր անցած տարիների յուրակերպ պատկերները, հուշերը ի մի բերել և վերհուշի ձևով պահ տալ սերունդներին: Այդ հուշերից շատերը ցավ են պատճառում հեղինակին, բայց դրանք գումարվելով արտացոլում են հեռավոր ժամանակներում կատարված դեպքեր, իրադարձություններ, հայրենակիցների, մտերիմների ու հաճախ էլ անգութ մարդկանց մտապահված դեմքեր: Իր գործերում մշտապես ներկա է հեղինակը, վերհուշն ու ներկան խառնվում են իրար, և դժվար է սահմանազատել գործողությունների կատարման իսկական ժամանակը:

Անսահման կարոտի, հուշի ծվեններից հյուսված պատառիկներ են հիշեցնում նրա գեղարվեստական երկերը: Մանկության պայծառ երազները հաճախ խաթարվել են՝ բախվելով ծնողների հիշողություններում բույն դրած թախծոտ պատմություններին, ժամանակի անարդար, անմարդկային հարաբերություններին, բայց լավատեսությունը նրանից անբաժան է: Եղեռնի ցավոտ ներկայությունը միշտ զգացնել են տվել առաքինի, աշխատասեր, արմատներով էրզրումցի՝ կոշկակար հոր աչքերը:

Տղային փոքրուց հարազատ դարձան Շիրազի հայտնի բանաստեղծության վերափոխված տողերը. «բայց թողել է նա մի թել, հորս աչքի մշուշում»:

Արյան կանչով՝ հուշերի կծիկը, կարոտը, վիշտը փոխանցվել է նրան և իր դրոշմը թողել մանկան հոգու վրա: Տառապանք ու դառնություն, դժվար մանկություն ճաշակած երեխաները ավելի շուտ են մեծանում: Պատահական չէ, որ հասակակիցների մեջ, նա ավելի շուտ հասունացավ, նրա զգայուն սիրտը կարողացավ ավելի շուտ ըմբռնել կյանքի տխուր ու անարդար կողմերը, իր աշխատասիրության ու բազմակողմանի հետաքրքրությունների համար, նրան հարևանները կնքեցին «ծերուկ» մականունով:

Մի փոքրիկ, բայց դաժան միջադեպ խաթարեց տղայի մանկությունը, ի՜նչ իմանար երեխան, որ Մարիամ Աստվածածնի նկարը՝ ճակատագրական, այդքան անախորժությունների պատճառ պիտի դառնար: Տարիներ հետո հիշելու է իր

անսիրտ ռուսերենի ուսուցչուհուն, որ հոգու ողջ թույնը, կատաղությունը թափեց նրա վրա, անվանելով աստվածապաշտ, սպառնալով վռնդել դպրոցից, բայց գտնվեցին բարի մարդիկ, որոնք սատարեցին և օգնության ձեռք մեկնեցին:

Փորձությունները շատ էին, բայց մոր օրինանքը միշտ նրա հետ էր, որդին հավատում էր իր բաժին Աստծուն: Ժողովուրդն իմաստուն է «տաշած քարը գետնին չի մնում»: Ապավինելով բնատուր տաղանդին՝ Բախչինյանն իր աշխատասիրության ու նպատակասլացության շնորհիվ, իրականացրեց ծնողների հույսերը՝ թե՛ կրթության, թե՛ գիտության մեջ խորանալու առումով: Նա շարունակ փնտրտուքների մեջ էր, չէր բավարարվում իր իմացածով: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո (Վանաձորի մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետ) նա 1978 – 1981 թթ.Վիլնյուսի պետական համալսարանի լիտվական գրականության ամբիոնում զբաղվել է հայ – լիտվական գրական – մշակութային կապերի ուսումնասիրությամբ: Տարիներն անհետևանք չմնացին. նա սիրեց ու մտերմացավ այս երկրին ու ժողովրդին, բայց ամենից շատ կապվեց լիտվացի մեծ բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսի հետ, երկար տարիներ պատիվ ունեցավ վայելել նրա ջերմ բարեկամությունը, նամակագրական կապ հաստատեց: Մտերմիկ, անկեղծ հարաբերությունների վկայությունը հաստատող նամակների փունջը՝ ուղղված Ֆ.Բախչինյանին, առաջին հայացքից կարող է անձնական տպավորություն թողնել, բայց ընթերցման ժամանակ բացահայտվում են Մեժելայտիսի ներաշխարհը, մտահղացումները, ծրագրերը, իսկ տողերի արանքում անկարելի է չնկատել բանաստեղծի անսահման սերը, նվիրվածությունը Հայաստանի, հայ ժողովրդի հանդեպ: Մեժելայտիսը ինքնամոռաց սիրել է Հայաստանը, այդ սիրո մեջ, անշուշտ, Բախչինյանն էլ իր դերն ունի:

«Ինձ համար յուրաքանչյուր հանդիպում իմ սիրելի Հայաստանի հետ նշանավոր իրադարձություն է, - գրում է Մեժելայտիսը, Հայաստանի հետ շփումը ինձ համար ավելին է, քան բարեկամությունը: Դա իմ ուշացած սերն է, սակայն մի տարբերությամբ. այն ծնունդ էր առել դեռ վաղուց իմ ծաղկող երիտասարդության

տարիներից: Այդ իսկ պատճառով էլ այն այդքան ուժեղ է, ինչպես առաջին սերը» **(Մեժելայտիս Է., 2013):**

Լիտվացի մեծ բանաստեղծը, Հայաստանը համարելով իր երկրորդ հոգևոր հայրենիքը, խորին ակնածանքով խոստովանել է, որ եթե Հայաստանը ոչինչ անգամ չունենար մեծն Նարեկացուց բացի, այդ էլ բավական էր՝ ընդունելու նրա վիթխարի ավանդը համամարդկային մշակույթի ասպարեզում: Նշանավոր բանաստեղծի համար հայ ժողովուրդը դարձավ հոգեհարազատ՝ իր ավանդույթներով, ազգային յուրահատկություններով: Նա ընդհանուր շատ բաներ նկատեց հայ և լիտվացի ժողովուրդների բնավորության, պատմական ճակատագրի, լավատեսության մեջ:

Այդ է պատճառը, որ իր ստեղծագործության մեջ զգալի տեղ հատկացրեց թե՛ Հայաստանին, թե՛ հայոց մեծերին:

Իր գրական ճանապարհին Մեժելայտիսը գրել է տասնյակ հոդվածներ, գրախոսություններ, որոնք ընդգրկվել են «Իմ կրկնակի Արարատը» ժողովածուում (կազմող և առաջաբանի հեղինակ՝ գրականագետ, թարգմանիչ՝ Ֆելիքս Բախչինյան):

Գիրքը բացահայտում է գրողի գրականագիտական նախասիրությունները, գեղագիտական հայացքներն ու գրական բարձր ճաշակը:

Ժողովածուի «Ոգեղեն համանվագ» խորագրի ներքո Ֆ. Բախչինյանը ներկայացրել է Հայաստանը՝ Էդուարդաս Մեժելայտիսի պոեզիայում, միաժամանակ ընդգծել, որ լիտվացի բանաստեղծի կողմից Հայաստանի հանդեպ յուրահատուկ վերաբերմունքը պատահական չէ, լիտվացի գրողների, գրականագետների, պատմաբանների բուռն հետաքրքրությունը դեպի հայ մշակույթը խոր արմատներ ունի, որոնց վերաբերյալ Բախչինյանը որոշակի տեղեկություններ է հաղորդում: Մեժելայտիսը երեք անգամ (1969, 1979, 1982 թվականներին) տարբեր առիթներով այցելել է Հայաստան և տարիների ընթացքում մտերմացել, ճանաչել ու սիրել մեր երկիրը՝ գրելով այս ինքնաբուխ տողերը.« Հայաստանն ինձ առինքնել է առհավետ»:

Այդ սիրուց են ծնվել բանաստեղծական երեք շարքերը, որոնց հանգամանալից քննությանն է անդրադառնում Ֆ.Բախչինյանը, թափանցում բանաստեղծությունների խորքը, վերծանում գրողի ինքնատիպ ընկալումների ու գեղարվեստական խորիմաստ պատկերների աշխարհը:

Խորհրդանշական խորագիրը կրող «Քարե գինի» շարքի (թարգմ. Վ.Դավթյանի) հինգ բաժնից կազմված բանաստեղծական հյուսվածքներից յուրաքանչյուրը, ինչպես նկատում է Բախչինյանը, յուրահատուկ իմաստային ծանրաբեռնվածություն է կրում, բանաստեղծական տողերից հառնում է Հայաստանի կերպարը այնքան վառ ու շոշափելի, որ օտարազգի գրողի ժողովածուում ամեն մի ընթերցող ոչ միայն կհիանա հայոց աշխարհի գեղեցկությամբ, մշակույթով, այլ նաև կճանաչի պատմության քառուղիներով անցած տաղանդավոր ժողովրդին, որը դիմակայել է ճակատագրի բոլոր փորձություններին և երբեք չի վհատվել, այլ «արարել է իր խորությամբ ու բարդությամբ եզակի մի հրաշալի մշակույթ» **(Բախչինյան Ֆ., 2013):**

2019 թվականին Ֆ.Բախչինյանի նախաձեռնությամբ Երևանում՝ Առնո Բաբաջանյանի համերգասրահում, մեծ հանդիսավորությամբ նշվեց Է.Մեժելայտիսի ծննդյան 100 - ամյակը:

Բախչինյանի գրական ժառանգության մեջ իրենց մնայուն տեղն ունեն «Ֆրիտյոֆ Նանսեն. աշխարհի խիղճը», «Մի գիշեր Բարոն հյուրանոցում», «Հալեպ փրկության ափ» (2 հատորով), «La vie est belle», «Թափառաշրջիկը», “De’ja Vu” գործերը, նրա կազմած և հրատարակած Է.Մեժելայտիսի, Զահրատի, Զ.Խրախունու, Ս.Կապուտիկյանի, Վ.Պետրոսյանի, Ռ.Դավոյանի, Հր.Թամրազյանի, Հ.Էդոյանի, Հ.Գրիգորյանի, Ա.Պետրոսյանի գրքերը, հրաշալի թարգմանությունները (Է.Մեժելայտիս, Ք.Դոնելայտիս, Տ.Շևչենկո, Վ.Շկլյար և ուրիշներ ):

Նրա գրչին են պատկանում «Կալեվալա» կարելաֆիննական էպոսի, լատվիական «Լաչպլեսիս» էպոսի, ռուս հայտնի լրագրող Վլադիմիր Պոզների «Հրաժեշտ պատրանքներին» ինքնակենսագրական ծավալուն հատորի թարգմանությունները:

Բախչինյանն իր ստեղծագործություններում յուրօրինակ նրբանկատությամբ արձագանքում է թե՛ եղեռնի թեմային, թե՛ ժամանակի սոցիալ – քաղաքական իրողություններին, դրանց հետ առնչվող ազգային բարոյահոգեբանական փոփոխություններին:

Նրա «Déjà Vu. Հալեպ՝ սիրո և մահվան հովիտ» խորագիրը կրող գիրքը կարելի է դասել հայոց եղեռնին նվիրված լավագույն գրքերի շարքը, այն իր տեսակով շատ յուրօրինակ է, առանձնահատուկ: Ժողովածուն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, մեկ շնչով: Վեպի առիթով տպագրվել են բազմաթիվ հոդվածներ (Աբրահամյան Ք., Դեմիրճյան Պ., Հովեյան Հ.): Առաջին իսկ տողերից այն գերում է իր անկեղծությամբ, առինքնող անմիջականությամբ, իրադարձությունների, գործողությունների ընդգրկման խորությամբ ու հերոսների ընդգծված հուզականությամբ: Վեպը որոշ առումով ինքնակենսագրական է, բայց գլխավոր նյութը առնչվում է Օսմանյան Թուրքիայի կողմից 20-րդ դարասկզբին իրականացված Հայոց Մեծ Եղեռնի անջնջելի երևույթների հոգեբանական մեկնությանն ու ընկալմանը: Բախչինյանը հոգեբանական վերլուծությամբ, ինքնատիպ զգացողությամբ է կերտել իր կերպարներին, անգամ երկրորդական կերպարները ներկայանում են վառ, գունեղ նրբագծերով: Հեղինակը չի բավարարվում սոսկ փաստերի նկարագրությամբ, դրանք հավելում է կենդանի երևակայությամբ, հմուտ դիտարկումներով ու հյութեղ ասելիքով: Բախչինյանը հյուսում է իր պատմությունը՝ շարունակ, լարված իրավիճակում պահելով ընթերցողին:

Հեղինակի պատմվածքներն էլ առանձնանում են իրենց թեմատիկ բազմազանությամբ, պարզ պատմելաձևով, դրանք փոքրիկ մանրապատումներ են հիշեցնում՝ հուզիչ ելևէջներով, անցյալի տխուր դրվագներով, կյանքի լուսավոր ու

մութ կողմերով: Այնտեղ կարող ենք գտնել իրարից այնքան տարբեր ճակատագրեր ունեցող մարդկանց, որոնց ասես իր հովանու տակ է վերցնում հեղինակը, փորձում գտնել նրանց հոգու խորքում առկայծող լույսը, բարություն ներշնչումը:

Բախչինյանի հոդվածներից մեկը կրում է «Մարդն իրենով է զարդարում զբաղեցրած ոլորտը» խորագիրը, որն այնքան բնութագրական է հենց իրեն. «Զրույցն արվեստ է: Մարդկության մասին իմ զրույցները հիմնականում գրականության ֆոնին են իրականացվել: Դա է եղել ինձ տրված բաժինն այս կյանքում: Գրական ու թարգմանական ոլորտում իմ՝ բավականին երկարամյա կենսագրության ընթացքում բազմիցս եմ զրույցներով ներկայացել գրքի ու գրականության շուրջ» **(«Գրական թերթ», 2019 ):**

Ֆելիքս Բախչինյանն իր ապրած կյանքով հաստատել է հայի ուժեղ տեսակը՝ անգամ իր կյանքի մղձավանջային մի շրջանում, երբ հայտնվեց չեչենական գերության մեջ, 29 օր ապրեց անտառներում իբրև պատանդ, որը հետո պետք է շարադրեր «Վագրի տարի կամ չեչենական օրագիր» վեպում **(Բախչինյան Ֆ., 1998),** նա էլի չդավաճանեց իր մարդ տեսակին, հերոսաբար ընդունեց բոլոր փորձությունները և երբեք չչարացավ աշխարհի ու մարդու հանդեպ: Մի առիթով նա գրել է. «Մեր դարը ահեղ ցնցումների, անհավասարակշիռ տարուբերումների ժամանակաշրջան է: Մարդը՝ տիեզերքի հրաշք հյուլեն ու զարդը, անհիշելի ժամանակներից սկսած ակամա մրցակից դարձավ բնությանը, գուցեև լուսե ու վիթխարի նպատակներ հետապնդելով, սակայն, շրջակա աշխարհին տիրակալ դառնալով, չկարողացավ հնազանդեցնել իր ներքին ներհակ ուժերը»: Դրանով էլ պայմանավորված է Բախչինյանի անհանգստությունը, ամենամեծ ցանկությունը՝ «Ստեղծել մարդկության ամենամեծ գյուտը, մի գյուտ, որ մարդկանց մարդկայնացնի»:

Ֆելիքս Բախչինյանը անվերջ ստեղծագործական որոնումների մեջ էր. դրա վկայություններն էին իրար հաջորդող երկերը՝ «Կողոպտված ծերություն» նվիրված ծերանոցում իրենց կյանքի մայրամուտն ապրող մարդկանց ու նրանց առօրյային,

«Ֆրիտյոֆ Նանսենի գրական ժառանգությունը», Վիտաուտաս Լանձբերգիսի «Գարնան սոնատ» (Չյուրլյոնիսի ստեղծագործական աշխարհը), «Խավարին չհավատալու, խավարին չտրվելու պոեզիա» (Մուշեղ Իշխան), «Սիգիտաս Գյադայի բանաստեղծական աշխարհը», այս թվարկումը կարելի է շարունակել, իսկ թե որքան հետևողական էր նրա անդրադարձը մերօրյա գրական գործընթացին՝ հրապարակվող գրքերին մենագրություններին:

Ֆելիքս Բախչինյանն այլևս մեզ հետ չէ, այսօր արդեն հուշ դարձող օրերի միջից հառնում է նրա պայծառ ու լուսավոր կերպարը, բարի ժպիտը, ում բախտ եմ ունեցել մոտիկից ճանաչել, գնահատել ու վայելել նրա թանկ բարեկամությունը: Որքան՝ ծրագրեր, մտահղացումներ մնացին անկատար, բայց նա իր ետևից թողեց այնքան շատ բան, թանկ ու անգնահատելի հարստություն՝ իր ստեղծած գրականությունը: Բարի ու երանելի ժամանակների անսահման կարոտով հիշում եմ Ֆելիքս Բախչինյանի և հորս՝ բանաստեղծ Սուրեն Մուրադյանի անկեղծ մտերմությունը: Այն սկիզբ էր առել ծննդավայրից՝ իբրև հայրենակիցներ, ապա շարունակվել տարբեր հիշարժան ու հարուստ իրադարձություններով, գրական հանդիպումներ, միջոցառումներ՝ Վիլնյուսում, Կաունասում, Դոնի Ռոստովում, Նոր Նախիջևանում (ծանոթություն Ռափայել Պատկանյանի շառավիղների հետ): Տարիներ առաջ գրված, նրանց բարեկամությունը հաստատող, խորհրդանշական բանաստեղծությունը թող հնչի իբրև ներբող հիշատակի.

**ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Գրական կանթեղ**

Մենք ջուր ենք խմել Լոռվա աղբյուրից,
Մեր սեգ լեռներից առել վեհություն,
Ծաղիկներ փնջել ծաղկուն սարերից,
Լոռվա ձորերից առել խորություն:
Մեծ Թումանյանն է մեզ սեր ավանդել,
Մեր մեջ սերմանել զորություն, ճաշակ,
Մենք միասին սուրբ սեղան ենք նստել

Ու հպարտությամբ բարձրացրել բաժակ:
Մեժելայտիսն է մտերմացրել մեզ
Ու Վրաստանը՝ մեր հին բարեկամ,
Նանսենի գործը՝ հայազօծ, անկեզ
Բյուր թանկ անուններ, որ հիմա չկան:
Կանցնեն տարիներ, սիրով անսահման
Լալվարն ու Ձորը կապրեն հար ձուլված,
Մենք երկու փյունիկ թռչունի նման
Հարություն կառնենք՝ թև թևի տված...

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ֆելիքս Բախչինյանը բազմակողմանի ընդունակություններով օժտված մտավորական է: Նա ստեղծել է հարուստ գրականություն՝ գեղարվեստական, քննադատական, թարգմանական, հրատարակչական: Նրա գեղարվեստական արձակը (լայն կտավի գործեր, փոքր արձակ) աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ, ինքնատիպ ոճով ու գրելաձևով: Նա ստեղծել է լավ ավանդույթներ, հսկայական աշխատանքներ է տարել տարբեր ժողովուրդների հետ գրական, մշակութային կապերի ամրապնդման, գրողների ճանաչման, թարգմանությունների, հրատարակման առումով: Նա հանդես է եկել իբրև իր ժամանակաշրջանի տարեգիր և ստեղծել է գեղարվեստական արժեքներ, որոնք անդրադառնում են ժամանակի ստվերոտ խնդիրներին, հարցերին: Նրա գրական վաստակը, անգնահատելի ծառայությունները բարձր են գնահատվել թե՛ հայրենիքում, թե՛ նրա սահմաններից դուրս:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Անանյան Լ**. (**2011)**, Անկեղծության խտությունը, Բախչինյան Ֆ., La vie est belle, Երևան, «Գասպրինտ» հրատ.:
2. **«Ազգ» (2015),** N 40(7), Երևան**:**
3. **Բախչինյան Ֆ. (2011),** La vie est belle, Երևան**,** «Գասպրինտ» հրատ**.:**

4. **Բախչինյան Ֆ. (1998),** Վագրի տարի կամ չեչենական օրագիր, Երևան, «Գասպրինտ» հրատ.:
5. **«Գրական թերթ» ( 2011),** N 7 (10),Երևան:
6. **«Գրական թերթ» (2016),** N 7 (18), Երևան:
7. **«Գրական թերթ» (2016),** N 35 (28), Երևան:
8. **«Գրական թերթ» (2019,** N 2 (10), Երևան:
9. **Մեժելայտիս Է. (2013),** Իմ կրկնակի Արարատը, Երևան, «Գասպրինտ» հրատ.:

**REFERENCES**

1. **Ananyan L. (2011)**, Ankeghc'owt'yan xtowt'yowny' /The density of sincerity/, Bakhchinyan F., "La vie est belle", Yerevan, "Gasprint" ed.
2. **"Azg" (2015),** N 40 (30), Yerevan.
3. **Bakhchinyan F. (2011),** La vie est belle,Yerevan, "Gasprint" ed.
4. **Bakhchinyan F. (1998),** Vagri tari kam chechenakan o'ragir /Year of the Tiger or chechen Diary/, Yerevan, "Gasprint" ed.
5. **"Grakan t'ert'" (2011),** N 7( 10), Yerevan.
6. **"Grakan t'ert'" (2016),** N 7 (18), Yerevan.
7. **"Grakan t'ert'" (2016 ),** N 35(28), Yerevan.
8. **"Grakan t'ert'" (2019),** N 2(10), Yerevan.
9. **Mezhelaitis E. (2013),** Im krknaki Araraty' /My double Ararat/, Yerevan, "Gasprint" ed.

**Armenuhi Muradyan**

**Felix Bakhchinyan: portrait experience**

**Conclusion**

***Key words and expressions***: *memory, genocide, characteristics of creative life, will, fate, sadness, transiation.*

The article is dedicated to writer,literary critic,translator Felix Bakhchinyan. He is the author of more than a hundred books: monographs,novels,short stories,articles,reviews.

Felix Bakhchinyan is one of the unique figures of Armenian literature. His interests are very diverse.His literary legacy is one of the lasting values of Armenian literature.His artistic prose stands out for its thematic variety, unique style and writing stile. He created good traditions, carried out huge works in terms of strengthening literary and cultural ties with different peoples, recognition of writers, translations, publishing.

Thanks to his efforts, the museum of the great philanthropist and scientist Fritjof Nansen was created, of which he was the director. The familiarity of the Lithuanian poet Eduardas Mezhelaitis with Armenia, Armenian culture, and great Armenians is connected with his name.The writer who went through a difficult path was tied to his birthplace by strong threads.His native home left a deep and cherished mark on his literary world.

We came to the conclusion that Felix Bakhchinyan is talented as a novelist, critic and translator. Te novel “De’jà vu” which can be ranked among the best books dedicated to the genocide, occupies its worthy place in his fiction.

**Арменуи Мурадян**

**Феликс Бахчинян: попитка портрета**

**Заключение**

***Ключевые слова и выражения***: *воспоминание, геноцид, характеристика творческой жизни, воля, судьба, тоска,перевод.*

В данной статье обсуждается творческий путь писателья, литературоведа, переводчика Феликса Бахчиняна. Он автор более сотни книг: монографий, романов, рассказов, статей рецензий, обзоров.

Феликс Бахчинян – один из уникакальных деятелей армянской литературы.Его интересы очень разнообразны. Его литературное наследие является одной из непреходящих ценностей армянской литературы. Его художественная проза отличается тематическим разнообразием, неповторимым стилем и манерой письма.Он создал добрые традиции, провел огромную работу по укреплению литературных и культурных связей с разными народами, признанию писателей, переводческой и изздательской деятельности.

Его усилия благодария великому филантропу, ученому Фритьофу Нансену был создан музей, директором которого он был.С его именем связано знакомство литовского поэта Эдуардаса Межелайтиса с Арменией, армянской культурой, великами армянами. Писатель переживший трудный путь, был привязан крепкими нитями к месту своего рождения.Его родной дом оказал глубокое и заветное влияние ха его литературный мир.

Мы пришли к выводу, что Феликс Бахчинян талантлив как прозаик, критик и переводчик. Дотойное место в его художественной литературе занимает роман “Deja vu”, который можно причислить к лучшим книгам, посвященным Геноцида.

**Արմենուհի Մուրադյան** – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականության պատմություն, նորագույն շրջանի հայ գրականություն, կառուցվածքաբանական գրականագիտություն: Հեղինակ է շուրջ հինգ տասնյակ հոդվածի: armenuhi – muradyan@mail.ru.

**Арменуи Мурадян** – Доцент кафедрой новой и новейшей армянской литературы и методики ее преподавания Государственного института имени Хачатура Абовяна. Кандидат филологических хаук. Научные интересы: история

армянской литературы, история армянской литературы новейшего времени, структурное литературоведение. Автор около пять десятков статей. **armenuhi - muradyan@ mail.ru**

**Armenuhi Muradyan** - Docent of the Chair of Armenian New and Modern Litexature and its Teaching Methots at ASPU named after Khachatur Abobyan. Candidat of philological sciences. Scientific interest: History of Arnenian Literature (secund half of the 19th century). Histoxy of Armenian Litexature (modern Armenian literature and structural literary studies, He is an author of about five dozen article. **armenuhi - muradyan @ mail.ru**

*Խմբագրություն է ուղարկվել 02.12.2024թ.*
*Հանձնարարվել է գրախոսության 28.12.2024թ.*
*Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.*